# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Լևոն Հովհաննիսյան՝** Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Էդգար Մելքոնյան՝** Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

**Խորեն Պետրոսյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Արթուր Թամրազյան՝** Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (01.10.2021թ.)՝ ժամը 10:00-ն,

-հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

-էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 04.10.2021 թ.՝ ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Սնուցման մարտկոց | 900000 |
| 2. | Սնուցման բլոկ | 552000 |
| 3. | Թվային բազմակողմանի սկավառակներ (DVD) կարդացող և (կամ) ձայնագրող սարքեր | 131274 |
| 4. | Ցանցային երթուղագծիչներ | 920000 |
| 5. | Համակարգչային ստեղնաշարեր | 196279,23 |

| | | |
|---|---|---|
| 6. | Ցանցային միջերեսի քարտեր | 42000 |
| 7. | Ցանցային միջերեսի քարտեր | 48000 |
| 8. | Տեսաքարտեր | 150000 |

**3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|
| ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2 |
| ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց փակ. 8 |
| ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ 29ա, բն. 37 |
| ՄՈՎՍԵՍՅԱՆ ՍՊԸ | |
| «Միկրորինգ» ՍՊԸ | ՀՀ, քՁ Երևան, Սայաթ-Նովայի պող՝Ձ 33/63 |
| «Դ-Քոմփանի» ՍՊԸ | ՀՀ, ԲՁ Տաշիր, Գետափնյա փՁ 13շՁ բնՁ3 |
| <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ | ք. Երևան, Աբովյան 29, 3-րդ տարածք |
| Ավետան ՍՊԸ | Ավետ Ավետիսյան 1/6 |

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | Արժեք (ՀՀ դրամ) | ԱԱՀ | Գին (ՀՀ դրամ) | |
| 1 | ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ | 725000 | 20% | 870000 | 575000 | 20% | 690000.00 | |
| 1 | «Դ-Քոմփանի» ՍՊԸ | 749999.19 | 20% | 899999.02 | 648700 | 20% | 778440.00 | |
| 1 | ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | 749500 | 20% | 899400 | 663250 | 20% | 795900.00 | |
| 1 | «Միկրորինգ» ՍՊԸ | 750000 | 20% | 900000 | 750000 | 20% | 900000.00 | |
| 1 | ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ | 752500 | 20% | 903000 | 752500 | 20% | 903000.00 | Մերժված |
| 1 | Ավետան ՍՊԸ | 899000 | 0% | 899000 | 899000 | 0% | 899000.00 | |
| 1 | Մովսեսյան ՍՊԸ | 900000 | 0% | 900000 | 900000 | 0% | 900000.00 | |
| 2 | ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ | 465000 | 20% | 558000 | 465000 | 20% | 558000.00 | Մերժված |
| 4 | ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ | 770000 | 20% | 924000 | 758000 | 20% | 909600.00 | |
| 4 | Միկրորինգ ՍՊԸ | 766000 | 20% | 919200 | 766000 | 20% | 919200.00 | |
| 5 | ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | 163302.5 | 20% | 195963 | 163302.5 | 20% | 195963.00 | |
| 5 | <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ | 163510 | 20% | 196212 | 163510 | 20% | 196212.00 | |
| 5 | Մովսեսյան ՍՊԸ | 187580 | 0% | 187580 | 187580 | 0% | 187580.00 | |
| 6 | ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | 34965 | 20% | 41958 | 34965 | 20% | 41958.00 | |
| 6 | Մովսեսյան ՍՊԸ | 40500 | 0% | 40500 | 40500 | 0% | 40500.00 | |
| 7 | ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | 39960 | 20% | 47952 | 39960 | 20% | 47952.00 | |
| 7 | Մովսեսյան ՍՊԸ | 47800 | 0% | 47800 | 47800 | 0% | 47800.00 | |
| 8 | ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ | 124975 | 20% | 149970 | 124975 | 20% | 149970.00 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ | 125000 | 20% | 150000 | 125000 | 20% | 150000.00 | |
| 8 | ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ | 128300 | 20% | 153960 | 128300 | 20% | 153960.00 | Մերժված |
| 8 | Մովսեսյան ՍՊԸ | 148888 | 0% | 148888 | 148888 | 0% | 148888.00 | |

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 04.10.2021թ.՝ ժամը 11:00-ին, և

- 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից,

- 4-րդ չափաբաժնի մասով ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից,

- 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

**7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

7.1 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

7.2 ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1): ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

8.1 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ

-ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/՝ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) սխալ է լրացված ընթացակարգի ծածկագիրը,

-Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8.2 ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ

-հայտով ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1)՝ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

-Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8.3 ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ

- ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/՝ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում

o 5-րդ չափաբաժնի մասով նշված «մալուխի երկարությունը՝ 1.5մ., ստեղների քանակը՝ 103 հատ» չեն համապատասխանում առաջարկված «CrownMicro CMK-F02B (USB)» համակարգչային ստեղնաշարերի պարամետրերին,

o 8-րդ չափաբաժնի մասով նշված «հիշողությունը՝ 1GB» չի համապատասխանում առաջարկված «2GB Arktek GeForce GT610 AKN610D3S2GL1 (810MHz, DDR3, 64bit, VGA/DVI-I/HDMI)» տեսաքարտերի պարամետրերին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. հոկտեմբերի 07-ին, ժամը 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի պահանջներով՝ հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հոկտեմբերի 06-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արթուր Թամրազյան

Արուս Խաչատրյան